# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 09

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Վ.Բակլայանը**

29.12.2011թ., ժամը՝ $16^{00}$

ք.Հրազդան

*ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝*

-Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներից 63- ը /բացակայում էին Եղվարդ, Պռոշյան, Գետամեջ, Սևաբերդ համայնքների ղեկավարները/
-Լ.Միքայելյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
-Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ

*Օ Ր Ա Կ Ա Ր Գ*

**1.Պետական սոցիալական օժանդակության ծրագրերի շրջանակներում իրավասու մարմինների և մարզպետի նախաձեռնությամբ միջազգային ոչ պետական կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների մասին:**

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ Վ.Հունանյան/*

**2.Համայնքների ղեկավարների կողմից առևտրի, սպասարկման և ծառայությունների ոլորտներում իրականացված ստուգումների արդյունքների և մարզպետարան ներկայացված հաշվետվությունների մասին:**

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ս.Հակոբյան/*

**3.Քաղաքային և գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության ուսումնասիրությունների և հետագա խնդիրների մասին:**

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Վ.Թադևոսյան/*

**4.Մարզային և համայնքային ենթակայության մշակութային և մարզական հաստատությունների գործունեության վերլուծության մասին:**

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ Ա.Սիմոնյան/*

**5.Այլ հարցեր:**

**5.1.Բյուջեի հավաքագրման աշխատանքների մասին:**

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյան/*

**5.2.Մարզի համայնքներում պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության գործառույթների իրականացման մասին:**

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ տարածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչության պետ Ս.Հակոբյան /*

***ԼՍԵՑԻՆ՝***

1.ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ Վ.Հունանյանի զեկուցումը պետական սոցիալական օժանդակության ծրագրերի շրջանակներում իրավասու մարմինների և մարզպետի նախաձեռնությամբ միջազգային ոչ պետական կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

2.ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ տարածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչության պետ Ս.Հակոբյանի զեկուցումը համայնքներում իրականացված վարչական և ֆինանսական հսկողության արդյունքների մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

3.ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Վ.Թադևոսյանի զեկուցումը քաղաքային և գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության ուսումնասիրությունների և հետագա խնդիրների մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

4.ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ Ա.Սիմոնյանի զեկուցումը մարզային և համայնքային ենթակայության մշակութային և մարզական հաստատությունների գործունեության վերլուծության մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

5.Այլ հարցեր:

***ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝***

5.1.ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանը՝ բյուջեի հավաքագրման աշխատանքների վերաբերյալ:

5.2.ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ տարածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչության պետ Ս.Հակոբյանը՝ մարզի համայնքներում պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության գործառույթների իրականացման վերաբերյալ:

Վ.ԲԱԿԼԱՑՅԱՆ